ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՍՏԵՂԾՎԵԼ Է ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԽՈՒՄԲ

27.09.2023 15:15

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի **27.09.2023թ. 236-Ա** որոշմամբ ստեղծվել է փաստահավաք խումբ:

Մեջբերում որոշումից՝

Ելնելով Փաստաբանների պալատի կանոնադրությամբ ամրագրված Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը նպաստելու նպատակից,

հաշվի առնելով Ադրբեջանի կողմից Արցախի բնակչության նկատմամբ թույլ տրված վայրագությունների վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներում և սոցիալական այլ հարթակներում հրապարակված խիստ մտահոգիչ, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի վերաբերյալ տեղեկությունները հավաքագրելու կարևորությունը,

ի գիտություն ընդունելով ժամանակակից պայմաններում քաղաքակիրթ աշխարհին Արցախի ժողովրդի նկատմամբ ցեղասպան քաղաքականության դրսևորումը և մարդու անօտարելի իրավունքների նկատմամբ իրականացվող ոտնձգություններն ի ցույց դնելու անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Փաստաբանների պալատում ստեղծել փաստահավաք խումբ՝ ներգրավելով փաստաբանների

2. Փաստահավաք խմբի աշխատանքների համակարգող նշանակել Փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Արմեն Ասատրյանին

3.Փաստահավաք խմբի կողմից հավաքված արցախահայության նկատմամբ ադրբեջանական վայրագությունների՝ անձանց խոշտանգումների, հայկական պատմամշակութային ու կրոնական ժառանգության ոչնչացման ու անարգանքի մասին **նյութերը (այդ թվում՝**

տեսաձայնագրությունները, լուսանկարները) ամփոփիչ վերլուծությամբ ներկայացնել միջազգային գործընկերներին և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի իրավասու միջազգային կառույցներին**:**

Հ.Գ

Հարգելի՛ փաստաբաններ,

Համապատասխան նյութերի (լուսանկարներ, տեսանյութեր այլ ապացույցներ) առկայության դեպքում, խնդրում ենք տրամադրել դրանք փաստահավաք խմբին՝ ուղարկելով **@ChamberOfAdvocatesRA** տելեգրամյան հասցեին կամ առձեռն ներկայացնելով ՀՀ փաստաբանների պալատ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })